ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 նոյեմբերի 2022 թվականի N 1675 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 116-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 19-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշենի գյուղական համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու և Լճաշենի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» N 116-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման նախաբանից հանել «, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ, 47-րդ ու 84-րդ» բառերը.

2) որոշման 3-րդ կետի «ա» ենթակետի՝

ա. «149.72» թիվը փոխարինել «148.26» թվով.

3) N 4 հավելվածում՝

ա. «Գյուղատնտեսական» տողում «65.25» թիվը փոխարինել «63.79» թվով,

բ. «Ընդամենը» տողում «149.72» թիվը փոխարինել «148.26» թվով.

4) N 5 հավելվածում 14-րդ էջի՝

ա. «Այլ հողատեսքեր» «557-001» ծածկագրով «0.67» հա տողի դիմացից հանել «չմ» բառը.

5) N 5 հավելվածում 15-րդ էջի՝

ա. «Այլ հողատեսքեր» «780-001» ծածկագրով «0.20» հա տողի դիմացից հանել «չմ» բառը,

բ. «Այլ հողատեսքեր» «781-001» ծածկագրով «0.24» հա տողի դիմացից հանել «չմ» բառը.

6) N 5 հավելվածում 16-րդ էջի՝

ա. «Այլ հողատեսքեր» «815-001» ծածկագրով «0.35» հա տողի դիմացից հանել «չմ» բառը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

03.11.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ